

Այլըստանոր Անանեան և Այլըստանոր Մէլիք-Ազարեան: Ժողովը սահմանեց, որ գանձապահը իր ձեռքում կարող է պահել 150 թուրքի գումար, իսկ վարչութեան նախագահը կարող է ունենալ իր տրամադրութեան տակ 25 թուրքի այն դէպքերի համար, երբ պէտք է օգնել աղքատներին, չոր սպասելով վարչութեան որոշման: Ժողովի ուշադրութիւնը երկար գրաւեց գրադարան-ընթերցարանի հարցը: Վարչութիւնը առաջարկութիւն էր բերել, որ գրադարան-ընթերցարանի վերաբերմամբ իրան իրականապէս իրաւունք տրվի կարգադրելու ինչպէս ինքը լաւ կը համարէ: Ընդհանուր ժողովը որոշեց, գրադարանի վերաբերմամբ հետեւել այն վճարին, որ կայացրել է նախկին Գովախանեան հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը այս ամառ, և յանձնել վարչութեան, որ նա հետեւել անդամներ կայացնէ ընդհանուր ժողովին մանրամասն զեկուցում այն մասին, ի՞նչ ինչ հիմնարկութեան ինչ գրքեր են նուիրվում:

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Նոյեմբերի 5-ին

Հոկտեմբերի 31-ին տեղիս հայ-ուսումնաբանականների եկեղեցում տեղի ունեցաւ ծխականների ժողով: Ժողովում չորս անդամներ քննարկեցին հարցեր:

Նախ՝ քննվեցին նորակառուց եկեղեցու հաշիւները: հաշիւի երեւոյց, որ եկեղեցու վրա ծախսված է մինչև այժմ մօտ 25 հազար թուրքի, որը ձեռք են բերել նուիրատուներէն և փոխ առնելով Եղբ. Մովսէսեանների աւատարկան տնից, որին եկեղեցին դեռ 3 հազար թուրքի պարտ է մնում: Ժողովը որոշեց չորսհազարութեան նամակ ուղարկել Եղբ. Մովսէսեաններին: Յետոյ հարց եղաւ, որ միջոցներ ձեռք բերվին եկեղեցու գործընթացի ծածկելու և մէջը սպիտակացնելու համար: Դրա համար ընտրվեցին 3 հոգի՝ աշակերտու հին կառուցման ժողովին:

Երկրորդ հարցն էր երեքփոխանական հարցը: Հին երեքփոխանի պ. Ս. Յարութիւնեան, որ ընտրված էր 3 տարի ժամանակով, հրաժարական էր տուել. ժողովը դադարեց նոր երեքփոխանի ընտրութեամբ, բայց մի քանի անհաշիւ առաջարկութիւնից յետոյ, միաբերան ձայն տուեց հին երեքփոխանի և դրան օգնական նշանակել իր փոխանի տ. Շուշանիկ Յարութիւնեանին:

Երրորդը՝ ուսումնարանի ձգձգված հարցն էր: Մերոյս բանաձայն Մեքեան յայտնեց, որ ինքը քանիցս դիմել է հոգաբարձութեան, բայց նա զանազան պատճառներով թիւններով անկատար է թողել մեր խնդիրը: Ուստի առաջարկեց բողոք տալ կառավարութեան, որպէս զի ինքը կառավարութիւնը ուշք դարձնէ այդ հարցի վրա: Ժողովը հաւանութիւն տուեց տեղ-հօր առաջարկութեանը և խնդրեց հենց իսկոյն ձեռնարկել այդ բողոքին, որ շուտով բացվի դպրոցը, որովհետև շատ երեխաներ, չը կարողանալով մտնել քաղաքային և կամ Պաշկինեան դպրոցները (որը գտնվում է հայոց ուսումնարանում), մնում են անտնուստ:

Չորրորդ հարցն էր՝ եկեղեցու ել ու մուտքի հաշիւների կարգադրութիւնները: Մի առանձին մասնաժողով էր անցնումներում ընտրված այդ հաշիւները կարգի բերելու: Մասնաժողովի նախագահ պ. Յակովբ Մեղաւորեան մի քանի խօսքով բացատրեց, որ այլ ևս չը պէտք է քանաններին թողնել մեղաքակցութեան ճանապարհի վրա, չէ որ մեզը քանաններ ընտրելիս խոտապել ենք որոշ ուժիկ տալ: Որպէս զի այդ մեղաքակցութիւնից մեր քանաններին ազատած լինելը և մեր խոտառը կատարելը, մասնաժողովը մի շատ հեշտ միջոց է ընտրել, որ այլ ևս քանանները եկեղեցական ծէսերը կատարելիս սակարկութեան մէջ չը մտնեն, այլ գնան իրանց պաշտօնը կատարեն և անցնեն: Յանձնաժողովը Բաթումի հայ ժողովուրդը բաժանել է 6 դասակարգի. դրանցից հինգ դասակարգ պարտաւոր են վճարել ամուսնութեան, մկրտութեան և թաղման համար այն գումարները, որ որոշված է ամեն մի դասակարգի, իսկ վեցերորդ դասակարգի համար ամեն օրէնքները կատարել ձրի: Բացի մկրտութիւնից, ամուսնութիւնից և թաղումից ուրիշ ծէսերը կատարելիս թողնվում է միականի կամքին վճարել կամ չը վճարել: Եւ այդ տուրքերը պէտք է հաւաքել երեքփոխանի մօտ, որ տալու է ընկալագիր: Ժողովը ուղարկութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը և խնդրեց, որ առանց ուշացնելու սկսեն ցանկեր բաժանել ժողովուրդի մէջ, որպէս զի ամեն մի անհատ կամ ծովս իմանայ և իր կամքով յայտնէ, ի՞նչ քան դասակարգի մէջ գրվել է ուղում:

Յ. Մակարեանց

ՆԱՄԱԿ ԱՂՆԱԽԻՑ

Նոյեմբերի 2-ին

Բաւական ժամանակ է, ինչ դադարեցրած են մեր քաղաքային ինքնավարութեան նիստերը: Քաղաքապետը նշանակում է նիստ, բայց ձայնաւորները չեն գալիս: Նշանակվում է երկրորդ, երրորդ, չորրորդ նիստ, բայց նիստը չէ կայանում: Ի՞նչ է պատճառը: Քաղաքապետը և ձայնաւորները մէջ տեղի է ունենում միջնադէպը, որի պատճառով ձայնաւորները խռովում են և ալ ևս նիստի չեն գալիս: Տեղական մի ընկալագիրը ևս նիստի չէ քաղաքային վարչութեան՝ կատարելով տալ իրան սպանդանոցը, որ այժմ չափազործում է ինքը քաղաքը, և առաջարկում է կատարված տարեկան 1250 թ. ձայնաւորները միաձայն որոշեցին՝ ընդունել առաջարկված պայմանը, սակայն քաղաքային առողջ հակառակվեց՝ առաջարկելով, որ սպանդանոցը տալիս է քաղաքին մօտ 1450 թ., որից ծախս լինում է մօտ 100 թ.: Համաձայնութիւն չը կայացաւ: քաղաքապետը յայտնեց, որ երկու կողմերի եզրակացութիւններն ինքը կը ներկայացնէ պ. նախնադպրոցի բաժնեայեցողութեան: Այս պատճառով տեղի ունեցաւ պատահական քաղաքապետի և ձայնաւորների մէջ և վերջինները խռովեցին: Մենք չենք ընկնում այն հարցը, ի՞նչ որ կողմն է իրաւայի. սակայն միմէ ներքին է մեր ձայնաւորներին, որ իրանց ասածը չանցկացնելու պատճառով՝ երկուսիս պէս խռովում են ու նիստերին չեն յաճախում...

Մենք հաղորդել էինք, որ յուրիս ամսին մեր դուռն է վճարել հինգը կիրակի օրերը տօնավաճառ Սղիսիւսում, որպիսին այժմ գոյութիւն ունի թիֆլիսում: Նախնադպրոցը յարգել է դուռնայի որոշումը ու թողնուցութիւն տուել:

Անցեալ մարտ ամսին կայացել էր պ. Կարապետ եկեղեցու ծխականների ժողովը, որ ընտրեց հաշուետեմներ, որոնք պէտք է հաշիւ առնէին նախկին երեքփոխ. Ա. Ամիրխանեանից: Մենք գրում են, որ նախկին երեքփոխանի մօտ պէտք է լինի եկեղեցապատկան գումար մօտ 2000 թ.: Հաշուետեմները պահանջում են հաշիւ, բայց Ա. Ամիրխանեան՝ աղայական յատուկ սովորութեամբ՝ մերժում է հաշիւ տալ նրանց: Կրկին դիմում են գործակալի միջոցով, բայց դարձեալ մերժում են ստանում: Հայրաքաղաքային այս կամայականութիւնից՝ հաշուետեմները մտադրել են դիմել թեմական առաջնորդին, հակառակ դէպքում հաշիւ պահանջել դատարանի միջոցով: Մեր հաշուետեմների վրա պարտաւորութիւն կայ՝ շուտով կատարել իրանց յանձնարարքներին, անյապաղ անելով իրանց անելիքը:

Նորերս Միլիտանի գիւղում տեղի ունեցաւ հետեւեալ դէպքը. տեղացի մի գիւղացի լսում է, որ կինը սիրահարված է մի երիտասարդի վրա: Մի օր նա յանկարծակի մտնում է իր տունը և տեսնում իր ամուսնուհին սիրելիների հետ սիրային յարաբերութեան մէջ... Անպատեւած այս դէպքից՝ գիւղացին բարկացած հանում է դաշույնը և թեթիկ վիրաւորում երիտասարդի ուսը, իսկ իր կնոջը ընթրեալ կտրում է Այստեղ կինը խոտովանում է, թէ ինքը նրան չէ սիրել և ակա՛մ է ամուսնացել նրա հետ:

Նախկին հայոց ուսումնարանի տեղը բացված Լիանոզեան տարրական ուսումնարանում անցեալ տարի հայոց լեզուին յատկացրված էր չափաքան 6 դաս: Այս տարիվանից հայոց լեզուի դասերը տասնհինգականված են. առաջին բաժանումը ձեռնարկված է 4 դաս, իսկ երկրորդը՝ 3 դաս:

Նշանակները զգալի կերպով ցրտեցին: Գովկանեան սարերը ծածկված են ձիւնով:

Յ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Մշակիս այսօրվայ համարի հետ ուղարկում ենք թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի մեր բաժանորդներին տպագրած ծրարներ և նամակներ՝ 1900 թվ. բաժանորդագրութեան համար:

Թիֆլիսում սկսւում է կամ ընթերցել կոչված հիւանդութեան սաստիկանալու պատճառով՝ քաղաքային յատուկ հիւանդանոցը, որ շինված է Հաւաքարում վարակիչ հիւանդների համար, կարգադրել է, որ պէտք է ընդունի միայն սկաւրառային հիւանդներին մինչև հիւանդութեան թուլանալը:

Կիրակի, հոկտեմբերի 8-ին, Թիֆլիսի Կուկիա քաղաքապետում տեղի ունեցաւ քաղաքային նոր դպրոցի բացման հանդէսը, որին ներկայ էին ուսումնարանական շրջանի հոգաբարձու Սանովսկի,

Թիֆլիսի քաղաքապետ Գ. Սանովսկի, Երևանի քաղաքապետ Իսահակ Մելիք-Աղամալեան և ձայնաւորներ:

Յայտնի ինքներ Լինդէյ, Տետազոտելով Գուբայի գաւառի ջրերը, գտել է մի նոր միջոց Բազուի ջուր մատակարարելու համար: Նրան աղովակ է հաղորդել լեռնակոյտի ստորոտում գտնվել ջրի մեծ քանակութիւն, որն այժմ ցրվում է այս ու այն կողմը և մասամբ մտնում հողի տակ: Լինդէյ կարծում է, որ այդ ջուրը կարելի է ժողովել և նրան ուղղել դէպի Բազու: Այդ ջուրը, Լինդէյի կարծիքով, աւելի առողջարար և մաքուր է, քան Սամուր և Կուր գետերի ջրերը:

Կազմարովայի օպերետային խումբ, սկսում է աւելի և աւելի գրաւել հասարակութիւնը: Նոր օպերետներէրը աչքի է ընկնում «Վարդագոյն դովիտ», որ մեծ աղբորութեամբ ներկայացվեց կիրակի, Նոյեմբերի 7-ին: Կազմարովայի խմբի մէջ երգչուհիները աչքի են ընկնում արկին Ախտէր, Տրոցկայա, իսկ տղամարդկանցից՝ Բիազի, Պիարեկ և ուրիշները:

Թիֆլիսի քաղաքային Ուսումնարանի անդամներ Տետազոտելով և իշխան Չէրեքով Դուռնայի երկկուս նիստում նորից ընտրվեցան: Նոյն նիստում Դուռնայի միաձայն որոշեց դատի երկարակի ձայնաւոր իշխան Ն. Թուռնովին այն կեդրոնների համար, որ նա կատարել է գնահատական ցուցակների մէջ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Տեղացի այն գիւղացիները, որոնք սերմացու ցորենի կարել էին գործ, ժամանակին դիմել են վանքին, ինչպէս լինում է փոխարինաբար ցորեն տալ իրանց ցանելու, սակայն վանքը մինչև այսօր դեռ որոշում չէ կայացրել և խեղճ գիւղացին յոյսը դնելով վանքի վրա՝ ոչ միջոց է փնտռել սերմացու գնելու և ոչ էլ արան է տուել մի ուրիշին ցանելու: Ինչ կը լինի սրանց վիճակը, եթէ եկող տարի ևս ցորենը նոյն դէպքի վրա կանգնի»:

ԷԶՄԻԱՇՆԻՑ մեզ գրում են. «Շուտով պատրաստ կը լինի վանքի քաղանքը, որի վրա ծախսված կը լինի աւելի քան 4—5 հազար թուրքի: Թէ ինչ կարել կար էլ միջոցի դառնում մի նոր քաղանք չինել, մինչդեռ Վաղարշապատի եկեղեցապատկան քաղանքը ոչ թէ միայն բաւականութիւն էր տալիս թէ տեղացիներին, թէ միաբաններին և թէ ձեռնարանի աշակերտներին, այլ շատ անգամ օրերով և շաբաթներով անհղորձ էր մնում, այդ ի հարկէ, վանքի գործն է. սակայն պէտք է ասել, որ վանքի քաղանքի գոյութիւնը բաւական վնաս է թէ իրան վանքին և թէ մեր գիւղի եկեղեցուն, որովհետև միաբանները և ձեռնարանի վարչութիւնը վնասում էին եկեղեցապատկան քաղանքին տարեկան ոչ աւելի քան 200 թուրքի, իսկ վանքի քաղանքը՝ գործադրութեան մէջ մասնակցեց յետոյ, թէ և մեր եկեղեցին կը ընկնի տարեկան 200 թ. աւելի եկամուտից, բայց և վանքի վրա առանձին քաղանքը պահելը քառասպատիկ աւելի կը նստի, եթէ նոյն իսկ չը հաշուեն նրա չինութեան վրա ծախսած 4—5 հազար թուրքի գումարը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, հոկտեմբերի 25-ին
Ներկայումս սաստիկ թանդութիւն է տիրում Թէհրանում: Ժողովուրդը օրերով սպասում է, հայ չէ ծաղկում: Շատերը քաղցած են մնում: Հայը ծախում են առանց տակաւի, ինչպէս իրանց կամքն է թելադրում, — չարքը (մեր 2 ֆունտը) 10—15 շահ (կոպէկ): Բնականաբար, հայի թանդութիւնն ազդել է և միւս մթնոթիւներին թանդութեան վրա: Սակայն ինչ հայ են ծախում, — բոլորովին խմբ, աղի և երբեմն դառը: Դէպքից օգտվելով՝ սաղաղանում են ժողովուրդի վրա հին և փոստ ցորենները: Եւ դարձա՛նալին այն է, որ այդպիսի ցորեններից թխած հացն էլ ձեռք չէ ընկնում և կառավարութիւնը կատարեալ անտարբեր է այդ գործում: Շատ անգամ հայի հետ խառնում են և աւազ, որ ուտելու ժամանակ մարդու առամեծի տակ զրոգործում է Կնեղի բարբեր հասարակ լեռ քարեր են, որոնցից ամուսնները գրում չեն հաշուում: Բանը մնում է իրանց խղճին: Պարսիկ ամբարն և խեղճ — շատ յարմար կը գան իրար... Նկատելի կերպով խառնում են ալ ու ձախ, մասնաւոր իրանց լեզուն չիմացողներին և օտարներին քաղաքային Հայերին դնելու ժամանակ չեն թողնում ձեռք տալ մթնոցներին: Կշռում են

այն, ինչ որ իրանք են ցանկանում: Կեղտոտութիւնը տիրում է ամեն բանի մէջ, այնպէս որ ձեր ուղած մաքուր բանը չէք գտնի երբեք:

Ինչ բաւական չէ այն, որ ժողովուրդը տառապում է սովից, նա տառապում է և մի քանի տարափոխիկ հիւանդութիւններից: Ներկայումս երեխաների մէջ սաստիկ տարածված են փոր-հարկը, բղջրաւ և կոկորդացաւ վարակիչ հիւանդութիւնները: Մանաւանդ աւելի տարածված է կոկորդացաւը, որին զոհ դնաց մօտեւոր Հայկական վարժարանի առաջին դասարանի աշակերտներից մէկը: Մի քանի աշակերտ-աշակերտներին պարոնջ չեն յաճախում դարձեալ նոյն այդ հիւանդութեան պատճառով: Մեծերի մէջ էլ կան հիւանդութիւններ, բայց տալ այժմ դեռ որոշ չեն: Քանի այս ուսումնական տարին սկսվել է, երբեք չէ անցնում, որ հայոց եկեղեցում մեռել չը լինի, դեռ մի կողմ թողնելով իր օրերը մեռածներին: Այն, այդպէս է ծան չի նստի օղաղուրի ջրածրարների կեղտոտ և ժահահոտ ջուր խմելը:

Ասում են, որ պարսիկներից աւելի են մեռնում: Եւ բնական է. մի ժողովուրդ, որը ապրում է խորին սովորութեան և հակառողջական պայմաններին մէջ՝ միշտ զոհ կը դառնայ զանազան վարակիչ հիւանդութիւններին: Ընդհանրապէս պարսիկները կեղտոտ են ապրում թէ՛ դրսում և թէ՛ ներսում: Փողոցները շատ անմաքուր են պահում: Նրանց դարձը կազմում է պատմական փոշին: Անդրադարձը փողոցներում աւելի դրժուարանում է քանի կամ անձրեւ եղած ժամանակ՝ անտանելի թողից կամ ցելից: Միայն մի քանի յայտնի փողոցներ են ջրում, այն էլ շատ սակաւ: ջրի պակասութեան պատճառով՝ փողոցներում տեղ-տեղ պատահում են սատկած կենդանիներ, քաղաքային և զանազան անմաքութիւններ: Մանաւանդ անտանելի է անյայտ փողոցների գոյութիւնը: Ի՞նչ կը լինի այն ժողովուրդի գոյութիւնը, որ այդպիսի պայմանների մէջ է ապրում: Դեռ աւելացնեմ սրա վրա և այն, որ պարսիկները չեն քաշվում, օրը ցերեկով, ամբողջ առաջ, փողոցներում կկրկն, սրտեղ էլ լինի, այն ժամանակ ամեն բան կատարեալ կը լինի Փողոցներում վխտում է սոսկ զանգեր և մարդկանց բազմութիւնը: Այնքան շատ են աղքատները, որ անասելի է: Նրանք հանգիստ չեն տալիս մինչև անդամ գէշերները: Գուռը ձեռնելով և բարձր աղաղակելով՝ ողորմութիւն են խնդրում: Դուր միջոցն անգործ չը ծախանակ կը հանդիպել փողոցներում պատերի տակ կուշ եկած աղքատ կանանց: Մի երկրում, որ չը լինեն աղքատները, այսպէս կը լինի աղքատների գոյութիւնը:

Խ. Բարսեղյան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

— Պիկար «Aurore» լրագրում մի բաց նամակ է գրել Վաղարշ-Ռուստի անունով, որի մէջ ասում է. «Մի տարի սրանից առաջ, զինուորական մի-նիստի հրամանով, ինչ դատի ենթարկեցին, մեղադրելով լրտեսութեան և դեղմամբների մէջ: Այդ մեղադրանքը մասամբ ջրվեց՝ վճարակ դատաւանի որոշմամբ և նրանով, որ քաղաքայինական արդարապատուութիւնը հրաժարվեց ինչ դատի ենթարկելուց: Այնու ամենայնիւ, եւ առ այժմ մեղադրվում եմ լրտեսութեան մէջ»:

Պիկար պահանջում է, որ ընդունվել վերադարձի և աւելացնում է, որ նա կը մերժի ներումն ընդունելը, որովհետև ներքին անմեղիս դա անմատուցել է և վիրաւորական:

— Իսրայիլ Վլոցկինշտէյն, Տրանսիլանիա գտնվող ղվիլիայի ղլիաւոր շտաբի գերմանական ղիւնուրական կորպոր պաշտօնից հրաժարվել է՝ Հարաւային Աֆրիկայի քաղաքները զորք մտնելու համար: Այդ օֆիցերին մեծ ապագայ էր սպասում, և հենց այդ պատճառով էլ նրա այդպիսի քայլը մեծ յուզմունք է առաջ բերել: Բերկլին շրջաններում: Կարծում են, որ հենց այդ է եղել պատճառը, որ Վլիշկը կայսրը շրջաբերական է հրատարակել, որով արգելվում է դերմանական զորքերում ծառայող օֆիցերներին մտնել քաղաքների զորքը: Կայսրը, ինչպէս հաղորդում են, երկրիւ է կրում, որ չը լինի թէ բարձր օրինակին հետեւն և ուրիշ օֆիցերներ:

— Լորդ Սոլսբիլիի ճառի այն մասը, որ ասում է. «Մենք չենք որոշում ոսկէ հանքեր և ոչ էլ նոր երկիրներ», զանազան մեկնութիւնների տեղիք է տուել անգլիական լրագրիներին: «Clobe» լրագիրն այդ առիթով նկատում է, որ անգլիական դոշակը պէտք է ծածանվի Պրէտորիայում և Բլեմֆոնտէյնում, և այդ ոչ թէ իբրեւ յաղթութեան նշան, այլ նա պէտք է ծածանվի այնտեղ մշտապէս՝ իբրեւ իշխանութեան նշան, որովհետև իշխանութիւնը և իրաւունքը պէտք է լինեն իրականապէս:

— «Standard» և մի քանի ուրիշ պահանջողական լրագիրները ասում են, որ Տրանսիլանիա և Սրանսիլանիա հարապետութեան նուազումն անհրաժեշտ է: Ազատամիտ լրագիրները մատնաջոյց են անում այն բանի վրա, որ պահպանողական լրագիրների այդպիսի հայեացքը հակա-

տում է լորդ Սոյսթերի ճանին, որի մէջ լորդը
յայտնել է, թէ խաղաղութիւնը կը կորսնցնէ իր
ապրանքները և թէ Անգլիան միտք չունի
երկիրներն նուաճելու: Լորդ Սոյսթերի ճանի
այդ կտորի ամենալաւ բացատրութիւնը տալիս
է «Daily Graphic» լրագիրը, որը յայտնում է,
թէ լորդ Սոյսթերի իր ճանի մէջ ոչինչ չէ ա-
տիկ Տրանսվալի միացման մասին, որովհետեւ
Անգլիան միշտ նայել է Տրանսվալի վրա իբրեւ
բրիտանական կառավարութեան սեփականու-
թեան վրա:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒՍԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

5 նոյեմբերի

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, 4 հոկտեմբերի: Պենըրալ Ժուրնալը
մանր հաստատող լուր այստեղ դեռ չէ ստաց-
ված:

«Natal Laveriser» հաղորդում է Էստկորտից,
նոյեմբերի 3-ից, որ դրանապատ գնացքը խոր-
տակվեց, որովհետեւ բոլորները հանել էին ընդունե-
լը. երկու վագոններ խորտակվեցին, նրանց մէջ
գտնվող զինւորները դուրս ընկան գետնի վրա,
մի և նոյն ժամանակ բռնիքներ սկսեցին հրացա-
նաձգութիւն և թնդանոթաձգութիւն:

ԼՕՆԴՈՆ: «Daily Telegraph» լրագիրն Էստ-
կորտից հաղորդում է նոյեմբերի 3-ից, որ դո-
քաբանին այն մասը, որ խուզարկութիւն էր
կատարում դրանապատ գնացքով, կորստ: «Daily
Mail» լրագիր տեղեկութիւններ համեմատ, վի-
րատվածներն և կորածները թիւը հասնում է
100-ի: Բրիտանական զորաբանի ընդհանուր
էր 170 հետևակ զինւորներ և 10 նաւաստիներ:

ՊԱՐԻԶ: Միւսիտարական լրագիրները ասում
են, որ վաղուց արդէն կառավարութիւնը ձա-
յներն մի այդպիսի ճնշող մեծամասնութիւն չէ
ստացել և հանրապետութիւնը մի այդպիսի կը-
տրական յաղթութիւն չէ տարել: Լրագիրները
մի և նոյն ժամանակ մեծ դժուարութիւն են խո-
սում Վալդէկ-Րուսսոյի մասին: Ինքնադատական
փոստակցութեան օրդանները խոտովանում են,
որ մեծամասնութիւնը սպասածից աւելի դժբե-
ք է և այդ բանը բացատրում են նրանով, որ
միւսիտար դառնալ ձգտող անձինք չեն կամենում
իշխանութիւնն իրանց ձեռքն առնել մինչև այն
դատի վերջնալը, որը ընկնում է բարձրագոյն
դատարանում:

ԼՅՍԿՈՐՏ, 3 նոյեմբերի: Մուլարկութիւն կա-
տարող հեծելազօրքը հանդիպեց 300 բոլորե-
րին, որոնք գրաւած ունէին մի զօրեղ դիր-
քով վրա, ութ մղոն հեռավորութեան վրա Էս-
կորտից, և դուրս քնց նրանց այնտեղից, մեծ
վնաս պատճառելով նրանց:

ՊՐՏՏԱԿԻ: Լեւեզայի արձանի բացումը կա-
յացաւ շատ չքեղ կերպով: Հանդիսին ներկայ
էին 5000 մարդիկ և միջազգային բոլոր իշխա-
նութիւնները:

6 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Թագաւոր Կայսրը և Թագուհին
Կայսրուհի Ալեքսանդրա Ֆելոգորովնա Օգոստա-
փառ Որդիներով և Մեծ Իշխաններ Նիկոլայ Նի-
կոլաեվիչ և Միխայիլ Նիկոլաեվիչի հետ նոյեմ-
բերի 5-ին ժամանեցին Յարսկոյ Սէլ:

ԼՕՐԵՆՑՈՒՄԱՐԿԵԶԷ, նոյեմբերի 4-ին: «Բէյ-
տէր» գործակալութիւնը: Բոլորները Լէդի-Սմիթի
մօտ գտնվող զինուոր բանակից հաղորդում են,
որ երեքշաբթի օր, Օրանման հանրապետու-
թեան բռնիքներ և անգլիացիների մէջ տեղի ու-
նեցած պատերազմի ժամանակ, բռնիքներ գրա-
ւել էին մի փոքր բլուր, որը անգլիական մի
զօրաբանին ամբողջ մի ժամ ուժեղացնում էր:
Գրանից յետոյ Պրէտորիայից մի մեծ թնդանո-
թիւց ուսուց գնացին անգլիական բառարեաններ
մէջտեղ. անգլիացիք սկսեցին ապահով տեղ ու-
րանել: Մի քանի ուսուցիչ պայթեցին յետ նահան-
ջող անգլիացիների միջև. կորուստները, յամե-
նայն դէպք, մեծ չեն: Երկու բռնիքներ սպա-
նւած են, վնասներ—վիրատուութեան: Թանկեղու-
նեք սպանված են, ութը—վիրատուութեան: Վէս
դիւերին բռնիքներ բոլոր մեծ թնդանոթները
զրկւած էին Լէդի-Սմիթի չորս կողմը և միաժա-
մանակ կրակ բաց արին: Բուլվարն սարքեց
բնում էին մի քանի հրդեհակային շինութիւններ:
Միւս օրը անգլիական զօրքերը դուրս եկան
պաշարված քաղաքից և գրաւեցին բլուրների
գագաթները՝ ուսուցիչից պատասխարկելու հա-
մար:

ՀԱՍՏԱԿ: Ի պատասխան երկրորդ պալատի
յանձնաժողովի նկատողութեան՝ տրանսվալիան
պատերազմին միջամտելու վերաբերմամբ, ար-
տաքին գործերի մինիստրը հետևեալ բացատրու-
թիւնը տուց. Նիդերլանդեան կառավարութիւ-
նը անպիշ ցաւում է արհեստանշ պատերազմի
մասին և միշտ պատրաստ է զօրք ղնել բոլոր

միջոցները, որոնք կարող են վերջ տալ պատե-
րազմին, եթէ դրա համար դէպքը ներկայանայ:
Այդ բարի ցանկութիւնը յայտնի է պատերազ-
մող կողմերին: Կառավարութիւնը այժմ, այնու-
ամենայնիւ, ցանկալի չէ համարում յայտնի
դարձնել այն քայլերը, որ նա անում է, կամ
կարող է անել: Անգլիական կառավարութիւնը
յայտնեց թէ չէ ցանկանում օտարերկրայ պե-
տութիւնների միջամտութիւնը և բոլոր պետու-
թիւններն էլ մինչև այժմ զգուշանում էին որ և
է միջամտութիւնից:

ԼՕՆԴՈՆ: «Standard» լրագիրն հաղորդում է
Պրէտորիայից, հոկտեմբերի 28-ից, որ «Diggers-
News» լրագրի հաղորդած տեղեկութիւնների
համաձայն, այնտեղ հաստատվում է այն լուրը,
թէ 3000 բռնիքներ դնում են դէպի Էստկորտ:

ՊՐԵՏՈՐԻԱ: Երէկ, առաւօտեան, անգլիացիք
18 թնդանոթով յարձակում գործեցին բռնիքների
380 մարդուց բաղկացած զօրաբանի վրա, Լէ-
դի-Սմիթից դէպի հարաւ: Բռնիքների մեծ թնդա-
նոթը ստիպեց անգլիացիներին յետ նահանջել
դէպի Լէդի-Սմիթի մօտ գտնվող բլուրը: Անգ-
լիացիների կորուստը յայտնի չէ. բռնիքների կող-
մից սպանված է մէկ մարդ և վիրատուութեան—երեք:

ԼՕՐԵՆՑՈՒՄԱՐԿԵԶԷ: Այստեղ շարունակ գա-
լիս են Տրանսվալից գաղտնի գործակալներ:
Երէկ եկաւ Օրանման հանրապետութեան պա-
լատի անդամը, որը, ինչպէս երևում է, գնալու
է Կապտադու: Պատճառը յայտնի չէ:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ: Վէնն շրջանում անգլիական պա-
հապան զօրքը ձեռքաւորեց երեք մարդկանց,
որոնք անգլիական խանութներից անգլիական
զինւորներին պատկանող իրեղէններ էին տա-
նում: Կարծում են, որ նրանք լրտեսներ են:

«Times of Natal» լրագրում տպւած է մի
թղթակցի հեռագիր Նոնդվէնցի՝ դառը գան-
գատով այն բանի մասին, որ զուգուսները երկ-
րի բրիտանական բնակիչները թողնում են ճա-
կատագրի կամքին: Չորս կողմը խանութները
կողոպտւած են. բնակիչներին բռնիքներ գերի
են տարել: Տեղացիները իրանց յանդուգն են
պահում, որովհետեւ անգլիացիները անպաշտպան
են: Երկու լը են կրում, որ տեղացիների թշնա-
մական վերաբերմունքը դէպի անգլիացիները
աւելի սուր կերպարանք կառնի:

ԼՅՍԿՈՐՏ: 2000 բռնիքներ՝ ութ թնդանոթով
գրաւեցին Էննեբոգելը, որ գտնվում է Էստկոր-
տից դէպի հիւսիս-արեւմուտք հինգ մղոն հեռա-
ւորութեան վրա:

ԼՅՍԿՈՐՏ, նոյեմբերի 3-ին: «Բէյտէր» գործա-
կալութիւնը: Լուրերին նայելով բռնիքները գրա-
ւեցին Վէնն դիւղը, որ գտնվում է Էստկոր-
տից 25 մղոն հեռավորութեան վրա:

ՏՈՒԼԻ, հոկտեմբերի 28-ին: Խաւա հաղոր-
դում է, որ բռնիքներ երեքշաբթի օր յարձա-
կում գործեցին Սելիկապի վրա, բայց տեսնե-
լով, որ զրբը գտնվում է զօրեղ զօրաբանի
ձեռքում, յետ նահանջեցին առանց կորուստի:
Կրօնիցի գետի վրայով: Գնդապետ Պրոմէր Տե-
տեկը հեռագիրն է ստացել Ուլապից: «Պա-
րադուր» Խաւա Սելիկապի ուղարկեց նորից մի
զօրաբանին 370 մարդուց բաղկացած: Գրանով
Սելիկապի ոյծը հասաւ 700 մարդու: Խաւա
Մակուտի գետի մօտ ուղարկեց նմանապէս 150
մարդ:

ԼՕՆԴՈՆ: «Բէյտէր» գործակալութիւնը: Ձին-
ուրական մինիստրութիւնը Կեմբրիջից ստացել
է հոկտեմբերի 28-ից հեռագիր. «Ամեն ինչ բա-
րեւջալը է»: Մի և նոյն բովանդակութեամբ
հեռագիր ստացվել է Լէդի-Սմիթից, նոյեմբե-
րի 1-ից:

ԼՅՍԿՈՐՏ: «Բէյտէր» գործակալութիւնը: Այսօր
այստեղ հասաւ տրանսվալի Լէդի-Սմիթից, լուր
բերելով Ուլապից, թէ ամեն ինչ բարեւջալը է:
Ռաբակոնութիւնը անհետանք մնաց: Ուլապ
դուրս եկաւ քաղաքից և յետ մղեց բռնիքներին,
առանց կորուստի բրիտանական զօրքի կողմից:

ՄԱՍՍԵՐՈՒ: «Բէյտէր» գործակալութիւնը:
Այստեղ անգլիական գործակալը երէկ յանկար-
ծակի ճանապարհ ընկաւ Մասսերոյց դէպի Լէ-
րօտօրի, որպէս զի հանդիպի բաղուտների զը-
խուր պարզելի հետ: Կարծում են, որ այդ
տեսակցութիւնը կապ ունի պարագլուխ Բուլի
կապակցի ընթացքի հետ, որի մասին ասու-
մ են, թէ նա հակված է բռնիքների կողմն անցնե-
լու:

ԿԱՊԵՏՏԱՒ: «Բէյտէր» գործակալութիւնը:
Բուլէր մերձեց Նիլի խնդրեք՝ աղին. խոսքով
նրան բաց թողնելու մասին, և նկատեց, որ
տրանսվալիան զօրք բրիտանական երկրի
մտաւ այն ժամանակ, երբ անգլիական զօրքը
դեռ չէր հասել պատերազմի տեղը և այդ պատ-
ճառով էլ պատերազմական մեծ օղուտներ ու-
նեցաւ:

ԿԻԼ: «Վոլֆ» գործակալութիւնը: Կայսերական

զօրքը, երկու պրինցիբերի հետ, այսօր ճանա-
պարհ ընկաւ Հոնդեբուրգ շոգենաւով Անգլիա:
ԼՕՆԴՈՆ: «Բէյտէր» գործակալութիւնը: Ժու-
րի մահվան մասին այստեղ պաշտօնական
տեղեկութիւն չէ ստացվել: Լորէնց-Մարկէլէից
հոկտեմբերի 29-ից հաղորդած լուրը, որը ստա-
ցվել է այսօր «Բէյտէր» գործակալութիւնը, հա-
ղորդում է, որ Ժուրը փոքր ինչ տկար էր,
բայց յետոյ նա առողջացաւ:

Կ. ՊՈԼԻՍ: «Բէյտէր» գործակալութիւնը, Կ.
Պոլսի գործակալութիւնը, պաշտօնական տեղե-
կութիւնները համաձայն, յայտնում է, որ օտար-
երկրեայ լրագիրների հաղորդած լուրը՝ սերբերի
և լեռնականների մէջ տեղի ունեցած արհու-
հեղ կռիւի մասին, հնարովի են. հնարովի են
նաեւ այն լուրերը, թէ խիբրալայ գնդապետը
խախտել են յունական սահմանը և թէ անկար-
գութիւններ են տեղի ունեցել Կեպրէլէի վիլա-
յետում:

ՄԱԳԻԲԻ: «Հաւասի» գործակալութիւնը: «Վար-
Ն» գրանակիր նաւը Բարցելոնա ուղարկվեց:
Դաւադրութեան դիմաւոր ղեկավարները կը
տանվին նաւը, եթէ ազգաբնակիչները ընդդի-
մադրութիւն ցոյց տայ հարկերը վճարելու ժա-
մանակ:

7 նոյեմբերի

ԼՕՆԴՈՆ: «Բէյտէր» գործակալութիւնը: Այ-
սօր Կապտադու հասած զօրքերը մինչև այժմ
եկածների հետ կազմում են աւելի քան 27000
մարդ: Նոր եկած զօրքը մի մասը կիջնի Կապ-
տադու, մի մասը Իստ-Լոնդոն և մի մասը—
Նատալ: Տեղադրանք թաղանթում է զօրքերի տե-
ղափոխութիւնը:

ՊԱՐԻԶ: Բարձրագոյն դատարանը: Վերսալէց
միապետական մեղադրվողները հարց ու փոր-
ձը: Դէվօ հերքում է իր յարաբերութիւննե-
րը ուրիշ լիւանների հետ: Դերուլէր պնդում է,
որ նա սիրում է հանրապետութիւնը, ընտա-
րում է պարլամենտական ընկնել և յարձակ-
վում է հանրապետութեան նախագահի վրա:
(Յուզմունք): Պրօկուրօրը պահանջում է դատա-
պարտել մեղադրեալին՝ վիրաւորանք հասցնելու
համար: Երկար վիճաբանութիւններից յետոյ
դատարանը դատաւարտում է Դէրուլէրին ե-
րեք ամսով բանտարկութեան: Յաջորդ նիստը
տեղի կունենալ երկու շաբթի:

ԼՅՍԿՈՐՏ: «Բէյտէր» գործակալութիւնը: Այ-
սօր առաւօտեան բռնիքներ յանկարծակի յար-
ձակում գործեցին Էստկորտի վրա հիւսիս-արե-
ւմուտքից, բայց թնդանոթի հարուածը ստիպեց
թշնամուն շտապով յետ քաշվել: Ներկայումս
զինուոր հրամանատարութիւնը գտնվում է գե-
ներալ Գիլիարդի ձեռքում:

ԿԻՄԲԵՐԼԵՅ, 30 հոկտեմբերի: Թշնամին այ-
սօր ամբողջ օրը ամբակում էր քաղաքը:
Ապաւից տեղացիներն մի կլին, գոյլին հասցրած
վնասը աննշան է: Երկու գիշերապահ խմբեր
դուրս եկան քաղաքից և ընդհարվեցին թշնամու
զօրաբանին, այնպէս որ անգլիացիների կող-
մից երկու մարդ վիրաւորվեցին, երկու ձիեր
սպանվեցին:

ԼՕՐԵՆՑՈՒՄԱՐԿԵԶԷ: Տրանսվալիան «Volk-
sem» պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ
մեծ կամուրջը Տուրէլի վրայով, Կոլէնգոի մօտ,
կատարելապէս քանդված է:

Նոյեմբերի 3-ին 600 բռնիքներ, որոնց մօտ
կային և թնդանոթներ, գրաւեցին Դէլվալուր
անցքը՝ անգլիացիներից Դէլվալուր տեղեւ: Տնա-
բաւորութիւնը խլելու համար:

8 նոյեմբերի

ԼՕՆԴՈՆ: «Բէյտէր» գործակալութիւնը: Էստ-
կորտից, նոյեմբերի 6-ից, ստացված պաշտ-
նական հեռագիրը ասում է. «Այսօր, առաւօ-
տեան, հիւսիսային առաջաւոր պահակի հրամա-
նատար օֆիցէրը յայտնեց, որ թշնամու ձիաւոր
պահակները առաջ են արշաւում, ուղղվելով
դէպի Էստկորտ: Ապա առաջաւոր պահակներից
ստացվեց տեղեկութիւն, որ մի քանի զօրա-
բաններ, բաղկացած 500 մինչև 700 մարդ-
կանցից, գալիս են դէպի Էստկորտ հիւսիս-արե-
ւմուտքից և 150 հոգուց բաղկացած մի զօրա-
խումբ գալիս է երկաթուղու ուղղութեամբ: Այդ
կէտից կէս մղոն հեռու դէպի հիւսիս-արեւմուտք
անգլիական պահակների զինեցին թնդանոթա-
ձգութիւն թշնամու դէմ: Նաւային թնդանոթ-
թը 8000 եւրո տարածութեամբ վրա ուսմբ
գցեց, որոնք պայքարեցին թշնամու դիմ մօտ և
նա շտապով հեռացաւ: Կէսօրին առաջաւոր պա-
հակները յայտնեցին, որ բլուրների վրա երևում
են մեծ թնդ բռնիքներ: Զօրքերը նորից վերադա-
նան բանակ:

ՊՐԵՏՈՐԻԱ: «Բէյտէր» գործ. երէկ երկու
հանրապետութիւնների զօրքերից կազմված մի
զօրաբան զբաւեց Կոնսթանց առանց զինա-
դրութեան հանդիպելու: Բնակիչներ այնտեղ չը

կային: Կոնսթանց չընկալաւ որ երկրը քաղա-
քի հետ միացրած են Օրանման հանրապետու-
թեան:

ԿԱՊԵՏՏԱՒ, 2 հոկտեմբերի: «Բէյտէր» գոր-
ծակալութիւնը: Բռնիքներ զօրաբաններ, որ բաղ-
կացած էր 450 մարդուց, երէկ գրաւեց Ալիվան-
Նօրտը, բարձրացրեց այնտեղ երկու հանրա-
պետութիւնների զօրախմբերը և մի շրջաբնա-
կանով յայտարարեց, որ այդ քաղաքը միացն-
վում է իրան պատկանող երկրին: Տեղական
անգլիական աղբարնակութիւնը պարտաւոր է
երկու շաբաթվա ընթացքում հեռանալ քաղա-
քից:

ԿԻՆԵՍԱՍԻՆ, 2 նոյեմբերի: «Բէյտէր» գոր-
ծակալութիւնը: Բռնիքներ զբաւեցին Բուրգէր-
տօրը և, ինչպէս երեւում է, արշաւում են
Ստրոմբոլէի վրա:

ՕՐԱՆՄԱՐԿԵԶ, 4 նոյեմբերի: «Բէյտէր» գոր-
ծակալութիւնը: Պատրաստութիւններ են տեսն-
վում կենտրոնացնելու այն զօրքերը, որոնք
պէտք է ազատեն պաշարված Կիմբրէլէյ: Մե-
տուէն սպասում է միայն օգնական զօրքերին.
զբաղիական թրիգաղայի մեծ մասը արդէն տե-
ղի վրա է: Միջոցներ են ձեռք առնված Կիմ-
բրէլէյի հետ երկաթուղական հաղորդակցու-
թիւնը վերականգնելու համար:

ՏԼԱՆՏԱԼԱՍԿԵԶ, 4 նոյեմբերի: «Բէյտէր»
գործակալութիւնը: Նամակների փոխանակու-
թիւնը Ուլապի և Ժուրի մէջ, ուր առաջինը
ցաւակցութիւն է յայտնում պատերազմի առի-
թով և յայտարարում է, որ բռնիքը կատարե-
լապէս մարդասիրաբար են վարվում, բարեյա-
շող տպաւորութիւն թողեց:

ԼՕՐԵՆՑՈՒՄԱՐԿԵԶԷ, 6 նոյեմբերի: Բռնիքներ
կողմից ստացված տեղեկութիւնների համեմատ,
Կոլէնգոի մօտ դրանապատ գնացքի հետնոյեմբերի
3-ին դերին են վերցված 56 անգլիացիներ, որոնց
թիւում է «Morning Post» լրագրի թղթակից
Չէրլի: Դերինները Պրետորիա ուղարկվեցին:

ՎԱՐՇԱՎԱ: Համալսարանի խորհուրդը վճռեց
պապական զրբը այն գումարը, երբ ուսանող իր
ժամանակին չէ կարողանում մտնել համալսա-
րանում դասաստութիւններ լսելու վճարը, որը
պէտք է կամայ-կամաց հանդիպի մինչև զիջում
ստանալը:

ՊԱՐԻԶ: Լուրէ, ներքին գործերի, առևտրի,
ժողովրդական լուսատրութեան և կոօնիստների
մինիստրների ուղեկցութեամբ դեռ 12³/₄ ժամին
Նիւսեան պաշտպան յեղափոխութեան յաղթանակի
արձանի բացմանը Նաթիօն հրապարակի վրա:
Բաղմաթիւ դաւառական քաղաքների խորհուրդ-
ների անդամները և մէրքերը քաղաքային խորհու-
րի շինութիւնից հոտով դնացին հանդէս տեղը:
Բանուորները, կորպորացիաները և բաղմաթիւ
պատգամատրութիւնները կէսօրին սկսեցին թա-
փօր կաղմը դրօշներով, դրօշակներով և երաժշ-
տութեամբ Հանրապետութեան հրապարակի և
Իրար-Լուսաւոր բուլվարի վրա: Նշանակը հրա-
շալի էր: Նախագահին ամբողջ ճանապարհին ող-
ջունում էին խաղաղներից: Մանաւանդ ջերմա-
գին ընդունելութիւն գտաւ նա հանդէսի տեղը,
ուր ամբողջ ահագին էր: Մինիստրների խորհու-
րի նախագահին էլ ուղեկցում էին ողբերգած
աղաղակները: Լուրէ, շրջապատված մինիստր-
ներով, սենատորներով, պատգամատրներով և
քաղաքային խորհուրդների անդամներով, ներկայ
էր մի քանի հարիւր կորպորացիաների, պատ-
գամատրութիւնների, բանուորական միութիւն-
ների և դպրոցների աշակերտների գնացքի սկզբ-
ին, որոնք աղաղակներով ողջունում էին
Լուրէին և մինիստրներին: Նախագահը իր 36
սեւորդներով հեռացաւ հրապարակից

Типографія Грузинск. Т.—ва Большая Визикская ул., № 27